# ԴՐՕՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

ԱԲՐԱՀԱՄ ԵՍԱՅՈՒ ԿԻՍԻԲԷԿԵԱՆ. *Ծնուել է Վարանդայի Սխտորաշէն գիւղում 1892թ. Ժողովրդական ուսուցչի վկայականով աւարտել է Շուշուայ հայոց թեմական դպրոցը։ Իբրեւ ուսուցիչ աշխատել է Ճարտար գիւղի, Ստեփանակերտի, իսկ 1927թ. Բաքում հաստատուելուց յետոյ՝ տեղի հայկական դպրոցներում։ 1949 թ. աքսորուել է Ալթայ, վերադարձել է 1956թ. Մահացել է Երեւանում 1972թ. (՞)։*

*1919-1920թթ. նա ընտրուել է Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհրդի անդամ, 8րդ համագումարի քարտուղար, մասնակցել է 1919թ. Օգոստոսի 22ի համաձայնագրի նախապատրաստմանն ու ստորագրմանը, այնուհետեւ 1920թ. զարնանը ծաւալուած ռազմա-քաղաքական իրադարձութիւններին։*

*Խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ օրերին բանտարկուել է, ապա ազատուել 1921թ. Յունուարին ու ողջ կեանքում, ընդհուպ մինչեւ աքսորը, կրել «քաղաքականօրէն անբարեյոյս» անհատի տառապանքները։*

*Ա. Կիսիբէկեանը թողել է ծաւալուն, արժէքաւոր յուշերի 9 մատեան, որոնցից ստորեւ ներկայացնում ենք քաղուածքներ (ՀՀ պատմութեան պետական կենտրոնական արխիւ, ֆ. 314, դ. 1, գ. 34)։*

*ԱՎԱՐԴ ՂԱԶԻՅԵԱՆ*

Հայկական բանակի գլխաւոր ուժերը, գեներալ Դրօյի հրամանատարութեամբ, Զանգեզուրից մտան Ղարաբաղ եւ բռնեցին ամբողջ ռազմաճակատը, որպիսի հանգամանքը չէր կարող յայտնի լինել թշնամուն։ Դրօն գնդապետ Զ. Միսեանի հետ մտաւ Սարաշէն։ Այդ ժամանակ շտաբումն էր Հայաստանից եկած գործիչների ղեկավար Արսէն Յովհաննիսեանը մի քանի հոգու հետ։

Դրօն բոլորին բարեւելուց յետոյ, անցաւ գործի։ Սենեակի մուտքի մօտ, յատակի վրայ, փռեցին մի գորգ, որի վրայ նստեցին այդտեղ գտնուողները, իսկ սենեակի վերին մասում, փոքրիկ սեղանի վրայ, փակցրին Ղարաբաղի քարտէզը։

Գնդապետն սկսեց գեներալին ծանօթացնել ռազմաճակատների հետ։ Երբ գնդապետը մատիտը սահեցնում էր քարտէզի վրայով, Դրօն նրան կանգնեցրեց։

-Սա ի՞նչ գիւղ է,-հարցրեց նա։

-Սա ադրբեջանական Աւդալ Գիւլափլու գիւղն է եւ խիստ ամրացուած է ու այդտեղ մեծ ուժեր են գտնւում,-պատասխանեց զընդապետը։

-Ուրեմն նրանց յաջողուել է ձեր ռազմաճակատը մի քանի կիլոմետրով երկարացնել,-ասաց Դրօն։

Քարտէզի վրայ ծանօթանալով Ասկեարանի բերդի դիրքի հետ, ասաց.

-Թշնամին, գրաւելով այդ կէտը, Ղարաբաղի ուժերը բաժանել է երկու մասի։

-Իսկ սա ի՞նչ գիւղ է,-հարցրեց Դրօն։

-Սա էլ ադրբեջանական Մալիբէկլու գիւղն է, որը խիստ ամրացուած է,-պատասխանեց գնդապետը։ Միսեանը շարունակեց,-ահա եւ Շուշին՝ Ղարաբաղի կենտրոնը։

Դրօն խիստ ջղայնանալով ու խիստ կարմրելով, ձեռքը մեկնելով դէպի Արսէն Յովհաննիսեանն, ասաց.-Դուք բոլորդ, փոքրից մինչեւ մեծը, երեխաներ էք... ուրիշ ոչինչ-ի՞նչ էք մտածել, որ մտել էք Ասկեարանի փոսի մէջ՝ անուշադրութեան մատնելով Շուշին, թողնելով անտէր ու անտիրական։ Մի՞թէ դուք այդքանը չէք հասկանում, որ Շուշին ում ձեռքին է գտնւում, նա էլ Ղարաբաղի տէրն է։ Ի՞նչ էք արել, դուք փակել էք թշնամու բոլոր դռները եւ նրան հարկադրել կռուելու ձեր դէմ... Դուք Ասկեարանում ոչինչ չունէիք անելու։

Այնուհետեւ նա հեգնօրէն ասաց.

-Ասկեարանի բերդի միջին Համազասպը պանծալի...

-Դուք ուժերը պէտք է կենտրոնացնէիք Շուշուայ վրայ եւ մաքրէիք թշնամուց, որից յետոյ թշնամին Ղարաբաղի որեւէ կէտում չէր կարող կանգնել։

***

Դրօն ընդամենը մի շաբաթ էր, որ գտնւում էր Ղարաբաղում։ Այդ մի քանի օրուայ ընթացքում, հսկայական կարեւոր փոփոխութիւններ էին տեղի ունեցել։

Այլեւս անհանդուրժելի էր պայքարը շարունակել նախկին ձեւով։

Ներքին Թաղավարդ գիւղում հրաւիրուեց կոնֆերանս, որտեղ պէտք էր ընտրել հեղինակաւոր մի մարմին, որը ընդունակ լինէր շարունակելու Ղարաբաղի աշխատաւորութեան արդար պայքարը մուսաւաթական ոճրագործ կառավարութեան անարգ լծի դէմ ապահովելով նրա իրաւական, ֆիզիկական գոյութիւնն ու հանգիստը։ Այդ նպատակով ընտրուեց Լեռնային Ղարաբաղի կառավարչական օրգանը, որը բաղկացած էր հետեւեալ բաժիններից.

1. Կառավարութեան նախագահ՝ Արսէն Յովհաննիսեան,
2. Ներքին գործերի բաժին՝ Ա. Աւետիսեան,
3. Զինուորական գործերի բաժին՝ գեներալ Դրօ,
4. Պարէնաւորման գործերի բաժին՝ Խաչիկ Մելքումեան,
5. Գաղթականական գործերի բաժին՝ Յարութիւն Թումեան,
6. Աշխատանքի գործերի բաժին՝ Արշաւիր Քամալեան,
7. Առողջապահական գործերի բաժին՝ Լիդվիգ Տէր Գրիգորեան,
8. Արդարադատութեան գործերի բաժին՝ Ռ. Համզայեան։

Կոնֆերանսն առայժմ բաւարարուեց միմիայն այդ բաժիններով։

Կառավարութեան ամբողջ կազմը իր բաժիններով տեղաւորել միայն մի գիւղում այդ հնարաւոր չէր, ուստի տեղաւորուեցին իրարից մօտիկ մի քանի գիւղերում։ Այսպէս՝

1. Կառավարութեան կենտրոնը ընտրուեց Զանախչի գիւղը։ Այստեղ տեղաւորուեցին նախագահը եւ Ներքին գործերի բաժինը։
2. Զինուորական բաժինը տեղաւորուեց Ղարաբալաղ գիւղում, իսկ նրա մի մասը, գլխաւորապէս սպայական կազմը՝ Խաչմաչ գիւղում։
3. Գաղթականական եւ պարէնաւորման բաժինները զետեղուեցին Սխտորաշէն գիւղում։
4. Արդարադատութեան, աշխատանքի եւ առողջապահական բաժինները զետեղուեցին Ներքին Թաղավարդ գիւղում։
5. Ընդհանուր շտաբը մնաց իր նախկին տեղում՝ Սարաշէնում, որը բոլոր ռազմական ճակատների կենտրոնական կապի տեղն էր։

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի աշխատաւորութեան պայքարն ստանում էր աւելի լուրջ ու կազմակերպուած բնոյթ։

Ինչպէս նշեցինք, երկրի դրութիւնը միանգամայն փոխուեց։ Ասկեարանը գրաւուեց եւ Ղարաբաղի բոլոր շրջանների միջեւ կապ հաստատուեց, լրացնելով այն խոշոր բացը, որը սոսկալի հարուած հասցրեց պայքարին։ կազմուեց ընդհանուր հրամանատարութիւն։ Ղարաբաղի եւ Զանգեզուրի միջեւ ստեղծուեց ազատ յարաբերութիւն։ այդպիսով Հայաստանի հանրապետական կառավարութիւնն իր ձեռքն առաւ Ղարաբաղի աշխատաւորութեան ազատագրական պայքարը ու նրա ղեկավարութիւնը։

Այս բոլորն Ադրբեջանի մուսաւաթական կառավարութեանը համոզեցին, որ այլեւս հանգոյցը հեշտութեամբ չի լուծուի, ուստի հարկաւոր էր աւելի լուրջ մտածել, որովհետեւ նա այլեւս գործ չպիտի ունենար անզէն ու անօգնական մի բուռ ժողովրդի հետ։

Այս ամենով չվերջացաւ հարցը։ Ղարաբաղը պէտք էր ապահովել ռազմամթերքով։ Այդ պատճառով կազմակերպուեց ձիաների ու ջորիների մի գրաստագումակ, որն սկսեց Զանգեզուրից ու այլ վայրերից անդադար, գիշեր ու ցերեկ, զէնք ու ռազմամթերք տեղափոխել։ Այդ գործի ղեկավարն էր Գանձակի շրջանի Բանանց գիւղացի, քաջ ու անվեհեր, հսկայ կազմուածքով Թաքօղլի Գրիգորը, որն իր տրամադրութեան տակ ունէր նաեւ իր սեփական եօթ ջորիները։

Ռազմամթերքը կենտրոնացուեց զանազան պահեստներում։ Ապահովուեց զօրքը պարէնով, որ ստացւում էր գիւղացիներից՝ վճարելով նրանց արժէքը։ Այստեղ շրջանառութեան մէջ մտան Հայկական Հանրապետութեան դրամանիշերը։

Ադրբեջանական սահմանակից հայկական գիւղերում կենտրոնացրին զօրագնդեր՝ ժողովրդին ապահովելով թշնամու յանկարծակի յարձակումներից։

Բոլոր ֆրոնտներն ու կենտրոնական գիւղերը միացուեցին հեռախօսային գծերով։

Շուշին ու Խանքենդը շրջապատեցին այնպէս, որ ոչ ներսից կարող էին դուրս գալ, եւ ոչ էլ դրսից ներս մտնել։ Շուշիում պաշարուածներն ստիպուած էին իրենց կապը պաշտպանել Աղդամի հետ գիշերները, զոյնզգոյն լապտերների ու զանազան ազդանշանների միջոցով։

Ղարաբաղ եկաւ գնդապետ Թարխանեանի (Կուռօ) հրամանատարութեամբ մի հեծեալ ջոկատ, որը կանգ առաւ Գիւնէ Ճարտարի կալերում եւ սկսեց հետախուզել տեղանքը։

Վարանդայի եւ Դիզակի զանազան կէտերից բաց էին թողնում փոքրիկ ջոկատներ, որոնք տասնեակ կիլոմետրերով խորասուզուելով թշնամու տերիտորիայի խորքերը, կատարում էին հետախուզութիւններ եւ ոչ մի տեղ չէին հանդիպում նրան։ Կազմակերպուեց պարէնաւորման կայան։ Գաղթականները կայանից բաժանւում էին գիւղերի վրայ։ Ամեն մի գիւղում ընտրուեց գաղթականական կոմիտէ, կամ մարմին, բաղկացած երեք հոգուց, որը հոգում էր նրանց կարիքները՝ տալով բնակարաններ, հաց եւ այլ մթերքներ։ Կոմիտէն ունեւոր գիւղացիներից ժողովում էր ցորեն, ալիւր, հաց եւ վճարում արժէքը, որն ստացւում էր պարէնաւորման կայանից՝ գաղթականական տեսուչների միջոցով։ Տեսուչների աշխատանքն էր՝ գաղթականներին բաժանել գիւղերի վրայ՝ ի նկատի ունենալով գիւղի մեծութիւնը, նրա տնտեսական դրութիւնը ու բնակարանային յարմարութիւնները։ Տեսուչները շրջում էին իրենց յանձնուած շրջանի գիւղերը, տեղն ու տեղը ստուգում գաղթականների վիճակը, բնակարանային յարմարութիւնները, ծանօթանում նրանց կարիքների հետ եւ ըստ այնմ էլ ձեռք առնում համապատասխան միջոցներ ու, ժամանակ առ ժամանակ, գիւղի գաղթականական կոմիտէի հաշիւները ստուգում ու վճարում նրանց արած ծախսերը՝ մթերքների արժէքը։

Ապահովելով Ղարաբաղի սահմանները, գաղթականներին առաջարկեցին վերադառնալ իրենց գիւղերը եւ զբաղուել իրենց տնտեսութեամբ՝ միեւնոյն ժամանակ շարունակելով նաեւ տալ սրանց ապրուստի միջոցները։

Պէտք է նշել, որ այդ ծանր ու դժուարին օրերին միախմբուած ու միահամուռ ուժերով, բոլոր կուսակցութիւնների աշխատակցութեամբ, տարւում էր Ղարաբաղի աշխատաւորութեան պայքարը։ Ղարաբաղի աշխատաւորութիւնը այլեւս չէր կասկածում իր յաղթանակի մասին։ Նա միանգամայն ապահովուած էր։

Նժդեհը Ղափանից անցել էր Հադրութ, եւ պէտք է տեղական ուժերի հետ միասին գրոհէին Շուշուայ վրայ, երբ Կարմիր բանակը գրաւեց Բաքուն։

***

Կարմիր բանակը Բաքուն գրաւելու երրորդ օրը, Սուլթանովը Շուշիում մնացած հայերի միջոցով յայտնում է Ղարաբաղի ղեկավարութեանը, որ Կարմիր բանակը գրաւել է Բաքուն եւ Շուշիում կազմուած է «Յեղափոխական կոմիտէ» (Ռեւկոմ) իր նախագահութեամբ եւ առաջարկում է դադարեցնել յարձակողական կռիւները։

Ղարաբաղի ղեկավարութիւնն ուշադրութիւն չդարձնելով Սուլթանովի այդ նամակին, շարունակում էր իր աշխատանքները։ Սուլթանովի այդ նամակից մի քանի օր յետոյ, Բաքուից Ղարաբաղ եկան Կարմիր բանակի ներկայացուցիչները՝ Սահակ Տէր Գաբրիէլեանը եւ մի ռուս զինուորական։

Գեներալ Դրօն ընդունեց նրանց եւ նոյնիսկ համբուրուեցին Դրօն ու Տէր Գաբրիէլեանը։ Տէր Գաբրիէլեանը Դրօյին ճանաչում էր շատ վաղուց՝ Բաքուից։

Ճաշկերոյթի ժամանակ ռուս ներկայացուցիչն առաջարկում է Դրօյին, որ իր զօրամասերով վերադառնայ Երեւան՝ վստահ լինելով, որ «Ղարաբաղի հայ ժողովրդի ճակատագիրը գտնւում է հաւատարիմ բարեկամների ձեռքին»։ ...Ի միջի այլոց նա, տեսնելով Դրօյին զինուորական հասարակ հագուստով, ասում է. «Ես երեւակայում էի ձեզ ցարական գեներալի հագուստում, նրա ուսադիրներով»։

Ներկայացուցիչների վերոյիշեալ առաջարկին Դրօն պատասխանում է. «Ձեր առաջարկն ընդունել չեմ կարող, մինչեւ որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնից կարգադրութիւն չստանամ...»։

Տէր Գաբրիէլեանը եւ նրա ընկերը լսելով Դրօյի պատասխանը, այլեւ չեն պնդում իրենց առաջարկի վրայ եւ նոյն օրը հեռանում են Լեռնային Ղարաբաղից։

***

1920թ. Մայիսն էր, Ղարաբաղի չքնաղ գարունը։ Բնութիւնը պճնազարդուած գեղեցկուհու տեսք էր ընդունել, սակայն այդ հիասքանչ բնութեան ծոցում տառապում էր մի բուռ ընդունակ ու աշխատասէր ժողովուրդ։ Նա հրացանը ձեռքին զիշեր ու ցերեկ անքուն, անդադար, ահն ու վախը սրտում, մերկ ու քաղցած, շարունակում էր իր օրհասական պայքարը՝ մուսաւաթական, խանբէկական հրոսակախմբերի դէմ։

Զնայած հսկայական զոհողութիւններով, նա կարողացաւ պաշտպանել իր արժանապատուութիւնը, ազատութիւնն ու անկախութիւնը, ի դերեւ հանելով թշնամու պահանջը։

Գեներալ Դրօն տեսնելով ու զգալով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի տրամադրութիւնը, որոշեց իր բռնելիք դիրքը, նա շատ լաւ հասկացաւ իրերի դրութիւնը, որոշեց իր բանակով ու զորքերով հեռանալ Ղարաբաղից։

Նա լաւ գիտէր, որ Կարմիր բանակը Ղարաբաղ մտնելուց, կամ կամովին պէտք է զինաթափ լինի, կամ սկսի եղբայրասպան քաղաքացիական կռիւը, որին նա դէմ էր՝ հոգով ու համոզմունքով։

Բաւական երկար խորհելուց յետոյ, Ղարաբաղի իշխանութիւնը յանձնեց բոլշեւիկեան կազմակերպութեան ղեկավար բժ. Համբարձումեանին ու ինքն իր բանակով ու տեղի զորքերով հեռացաւ Ղարաբաղից...